

ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Սուրեն Գագիկի Թաղևոսյանի «Էթնո-կրոնական գործոնները Իրան-Ադրբեջան հարաբերությունների տարածաշրջանային զարգացման գործընթացում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Իրան-Ադրբեջան հարաբերությունները հիմնված են բազմաշերտ կապերի վրա: Դրանք պաշտոնական քաղաքական խոսույթում երկուստեք հաճախ բնութագրվում կամ ձևակերպվում են որպես ամուր և կայուն, սակայն իրական քաղաքականության մեջ ականատես ենք դառնում տարաբնույթ հակասությունների՝ սրացման տարբեր ինտենսիվությամբ և բովանդակությամբ: Եվ որքան էլ Իրան-Ադրբեջան հարաբերությունները պաշտոնական ամենաբարձր մակարդակներում որակվում են որպես այնպիսիք, որոնք կառուցված են խորը պատմական, մշակութային, կրոնական և անգամ ազգակցական կապերի վրա և որոնք ժամանակի ընթացքում դիմացել են տարբեր մարտահրավերների ու քաղաքական փոփոխությունների, այնուամենայնիվ, հատկապես վերջին տարիների իրողություններն ու ընթացիկ իրադարձային պատկերը ստիպում են ավելի խորքային կերպով վերլուծելու այդ հարաբերությունների էությունը և վերհանելու դրանց խորացման կամ վատթարացման իրական շարժառիթները, ուսումնասիրելու շփման եզրերը, հակասություններն ու շահերի ընդհանրությունները:

Խնդիրն այն է, որ երկու երկրների հարաբերություններն իսկապես ունեն յուրատիպություն: Մի կողմից, դրանք թվում են բավական կայուն և գրեթե չեն խաթարվում արտաքին գործոններով կամ անհամաձայնություն սերմանելու փորձերով: Այդպիսով տպավորություն է ստեղծվում, որ Իրանի և Ադրբեջանի միջև հարաբերություններն այնքան խորն ու լայն են, որ ցանկացած խնդիր կամ հակասություն կարող է լուծվել բարեկամաբար, և բաժանում ստեղծել այս երկու բարեկամական երկրների միջև թվում է անհնարին: Մյուս կողմից, տարածաշրջանում ակնհայտ մրցակցությունն ու առաջանցիկության սկզբունքի դրսևորումն այնքան ցցուն է, որ նկատելի հակասությունները հաճախ վեր են ածում զգալի ընդդիմապայքարի:

Նույն տրամաբանությամբ, օրինակ, երկու երկրների միջև ռազմավարական գործընկերությունը ենթակառուցվածքների զարգացման ոլորտում զգալի է, և թե՛ Իրանը, թե՛ Ադրբեջանը ակտիվորեն մասնակցում են տարանցիկ ու տրանսպորտային կապերի ամրապնդմանն ուղղված մի շարք նախագծերին: Սակայն, նույն այդ ենթակառուցվածքների զարգացման հետնաֆոնին հնարավոր նոր ճանապարհների, կապուղիների ստեղծումը, հատկապես արտաքին այլ դերակատարների միջոցով կամ նախաձեռնությամբ, առաջացնում է քաղաքական և հնարավոր տնտեսական լուրջ մտահոգություններ ու հակասություններ կողմերի միջև:

Պակաս ուշագրավ չէ նաև Իրանի և Ադրբեջանի միջև պաշտպանական համագործակցությունը, քանի որ, օրինակ, Կասպից ծովում և սահմանային շրջաններում համատեղ զորավարժությունները կարևոր քայլեր են երկկողմ հարաբերությունների

ամրապնդման գործում և երկու երկրների միջև արդյունավետ համագործակցության էական դրսևորում են: Մյուս կողմից, Ադրբեջան-Թուրքիա և հատկապես Ադրբեջան-Իսրայել պաշտպանական համագործակցության լայն սպեկտրը զգոնության և զգաստության առիթ է, հատկապես, Իրանի համար՝ իր անվտանգային շահերի խոցելիությունը չեզոքացնելու և բացառելու նպատակով:

Քաղաքական տիրույթում ևս կողմերն ունեն ընդգծված դիրքորոշում, օրինակ, միմյանց ինքնիշխանության և տարածքային ամբողջականության վերաբերյալ, սակայն շարունակում են հիբրիդային գործիքակազմի կիրառությամբ երբեմն ազդեցություն գործել նաև այս տիրույթում և խարխլել այն: Հատկանշական է, որ մի կողմից Իրանը ողջունում է Ադրբեջանի տարածքային ամբողջականության վերականգնումը և համարում, որ Հայաստանի հետ շարունակվող խաղաղության գործընթացը կստեղծի բարենպաստ պայմաններ ավելի խորը տնտեսական և տարածաշրջանային համագործակցության համար, իսկ տարածաշրջանում երկարատև խաղաղության հաստատումը նոր հնարավորություններ կբացի Իրանի և Ադրբեջանի միջև բազմակողմանի համագործակցության համար: Սակայն, մյուս կողմից Իրանի համար Հայաստանի տարածքով Ադրբեջանը Թուրքիային կապող ճանապարհի հնարավոր գործարկումն ու ենթակառուցվածքների զարգացումը դիտվում է երբեմն որպես ընդունված սահմանների խախտում և «կարմիր գծերի» հատում, իսկ որոշ քաղաքական շրջանակներում՝ նաև ազգային անվտանգության և սահմանների անխախտելիության սկզբունքի խախտմանն ուղղված սպառնալիք:

Նույն համատեքստում, թեև երկու երկրների պաշտոնյաները պարբերաբար ցանկություն են հայտնում խորացնել հարաբերությունները երկխոսության միջոցով՝ ընդգծելով իրենց ընդհանուր ժառանգությունը, սակայն դրան զուգահեռ միմյանց ուղղված սադրիչ հռետորաբանությունը հանգեցնում է դիվանագիտական բողոքների, լարվածության:

Վերոնշյալը փաստում է, թե իրականում որքան զգայուն և բազմաշերտ են Իրան-Ադրբեջան հարաբերությունները, որոնք ունեն ինչպես էթնո-կրոնական, պատմամշակութային, այնպես էլ սոցիալ-քաղաքական, տնտեսական, ռազմական, ժողովրդագրական ընդգրկումներ: Սա փաստում է նաև այն, որ երկու երկրները միմյանց հարաբերությունների կայունությունը և, միևնույն ժամանակ, պարբերական ցնցումները փորձում են պարպել կամ որոշակիորեն վերահսկելի դարձնել՝ գործադրելով ռազմավարական զսպման իրենց գործիքարանը և այդպիսով առայժմ հնարավորինս զերծ մնալով լայնամասշտաբ ընդդիմապայքարից: Այսինքն, երկու պետությունների՝ զսպման և անուղղակի գործողությունների ռազմավարություններով առաջնորդվելու ջանքերը փաստում են հարաբերությունների բնույթի երկակիությունն ու զգայունությունը:

Ավելին, տարածաշրջանային զարգացումների դինամիկան փաստում է, որ Իրան-Ադրբեջան, առանց այդ՝ էլ՝ բազմաշերտ ու խրթին հարաբերությունները հատկապես քաղաքական-դիվանագիտական տիրույթում վերջին տարիներին թևակոխել են բովանդակային նոր փուլ, ինչն առավել ցցուն կերպով արտահայտվեց հատկապես 2020 թ. 44-օրյա պատերազմի ելքից հետո, երբ Ադրբեջանը տարածաշրջանում իր դերի ու նշանակության նշանավորման և ամրապնդման շոշափելի քայլեր է անում, ինչն առանձնակի ուշադրության և զգոնության ազդակ է Իրանի համար: Ադրբեջանը, հատկապես 2020 թ.-ից հետո, ինտենսիվորեն խորացնում է Թուրքիայի հետ

ռազմավարական դաշինքը, ավելին՝ ընդարձակելով դրա շրջանակներն ու դրանում ընդգրկելով միջուկային տերություն հանդիսացող Պակիստանին, ինչպես նաև ավելի է խորացնում ռազմաքաղաքական և ռազմատնտեսական գործընկերությունը Իսրայելի հետ, որն Իրանի թշնամին է: Այս ամենը Իրանին ստիպում են ավելի սթափ գնահատել իրադրությունը՝ սրանում տեսնելով իր ազգային անվտանգությանը և տարածաշրջանում ունեցած իր դիրքը սասանող սպառնալիքների նոր թափ:

Ատենախոսության թեմայի արդիականությունը հատկապես նշանակալի է Հայաստանի Հանրապետության անվտանգային շահերի ապահովման տեսանկյունից: Ադրբեջան-Իրան հարաբերություններն էականորեն ազդում են մեր պետության արտաքին քաղաքական միջավայրի վրա: Հայաստանի համար, բացի Իրան-Ադրբեջան ռազմաքաղաքական և տնտեսական հարաբերությունների որակից ու դինամիկայից, ազգային անվտանգության առանձնակի զգոնության խնդիր է հանդիսանում Իրանի հյուսիսային նահանգներում ադրբեջանամետ և հակահայ տրամադրություններով աչքի ընկնող բազմամիլիոնանոց բնակչության առկայությունը:

Այսպիսով, վերոշարադրյալից բխում է, որ ատենախոսության թեմայի արդիականությունն անհերքելի է մի շարք առումներով, որոնցից որոշներն ունեն նաև օրակարգային նշանակություն ՀՀ անվտանգային շահերի տեսանկյունից: Բացի այդ, Իրան-Ադրբեջան հարաբերությունների էթնո-կրոնական չափումը, հատկապես՝ տարածաշրջանային զարգացումների գործընթացում հետազոտության խորը և արդիական առիթ է, քանի որ գնահատվում է երկու երկրների անցյալի, ներկայի և ապագայի հնարավոր հարաբերությունների քաղաքական, տնտեսական, ռազմական, մշակութային, սոցիալական և այլ տիրույթների որակը՝ մասնավորապես դիտարկելով և գնահատելով այդ հարաբերությունների էթնո-կրոնական հենքը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է միջազգային հարաբերությունների դերերի տեսության հայեցակարգային շրջանակի կիրառմամբ բացահայտել և համակողմանիորեն վերլուծել Իրան-Ադրբեջան հարաբերությունների զարգացման շարժընթացը 1991-2025 թթ.՝ քննության առնելով երկու երկրների արտաքին քաղաքական ինքնաընկալումների և տարածաշրջանային դերակատարման պատկերացումների ձևավորման, էվոլյուցիայի և փոխազդեցության օրինաչափությունները, ինչպես նաև երկկողմ մրցակցության և լարվածության հիմնապատճառները:

Առաջադրված նպատակին հասնելու համար հեղինակն իր առջև դրել է մի շարք խնդիրներ, որոնք ամբողջացնում են նպատակին հասնելու հետազոտական ջանքերը, մասնավորապես՝ փորձելով հիմնավորել միջազգային հարաբերությունների դերերի տեսության մեթոդական կիրառելիությունն ու վերլուծական արժեքն Իրան-Ադրբեջան հարաբերությունների խորքային ու համալիր քննության նպատակով, ձգտելով քննության առնել Իրանի արտաքին քաղաքական ընկալումների և քաղաքական վարքագծի փոխակերպումները հետհեղափոխական շրջանում, միջազգային տնտեսական պատժամիջոցների և տարածաշրջանային խորացող անկայունության պարագայում, փորձելով վեր հանել հետխորհրդային Ադրբեջանում ազգային ինքնության կառուցման գաղափարական-քաղաքական հիմքերը և դրանց ազդեցությունը երկրի արտաքին քաղաքական կողմնորոշումների ու մոտեցումների ձևավորման վրա: Այս և այլ խնդիրների առաջադրումը հեղինակին օգնել է համապարփակ ձևով մոտենալու գլխավոր նպատակի

իրականացմանը, և աշխատության բովանդակությունը ցույց է տալիս, որ դա նրան հաջողվել է: Հատկանշական է, որ հեղինակը փորձել է ոչ միայն գնահատել աշխարհաքաղաքական և տարածաշրջանային գործոնների համալիր ազդեցությունն Իրան-Ադրբեջան փոխգործակցության վրա, այլև կատարած հետազոտության և վերլուծության հիման վրա ձևակերպել այնպիսի եզրահանգումներ, որոնք նշանակալի կարող են լինել ոչ միայն Իրան-Ադրբեջան հարաբերությունների բնույթի ու մրցակցության շարժիչ ուժերի իմաստավորման, այլև, ընդհանուր առմամբ, տարածաշրջանային անվտանգության շահերի տեսանկյունից:

Աշխատանքի գիտական նորույթը: Ատենախոսության մեջ Իրան-Ադրբեջան հակասությունների վերլուծությունն իրականացված է գաղափարական-կրոնական, պատմա-ինքնութենական և աշխարհաքաղաքական-համակարգային գործոնները մեկ ընդհանուր տեսական շրջանակում համադրելով, ինչը հնարավորություն է ընձեռել ցույց տալու այս հարթություններում առկա խնդիրների փոխադարձ կապվածությունը և փոխազդեցությունը երկու երկրների արտաքին քաղաքական վարքագծի և մրցակցային հարաբերությունների ձևավորման վրա:

Մասնավորապես, գնահատվել է աշխարհաքաղաքական և տարածաշրջանային գործոնների ազդեցությունն Իրան-Ադրբեջան հարաբերությունների շարժընթացի վրա, որը կարող է ռազմավարական կանխատեսելիության հնարավորություն ընձեռել՝ ապագա զարգացումների ինչպես խորքային գնահատման, այնպես էլ, ինչը մեր կարծիքով՝ շատ կարևոր է, կարխարգելման և զսպման տեսանկյունից:

Հատկանշական է, որ ատենախոսության մեջ ներկայացվում է Իրան-Ադրբեջան հարաբերությունների հետխորհրդային ողջ ժամանակաշրջանի (1991-2025 թթ.) համակարգային ուսումնասիրություն, որը հիմնված է միջազգային հարաբերությունների դերերի տեսության հայեցակարգային վերլուծության վրա՝ դրա մեթոդական գործիքակազմի հնարավորինս կիրառմամբ, ինչը ինքնին հետազոտական ուրույն ու լայն հնարավորություններ է ընձեռում:

Ատենախոսության արդյունքների գործնական և գիտական նշանակությունը: Ատենախոսությունն աչքի է ընկնում ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակությամբ: Աշխատանքում ստացված արդյունքների ճշտությունը և հիմնավորումը պայմանավորված է հեղինակի առջև դրված խնդիրների լուծման համար կիրառված մեթոդներով:

Տեսական առումով՝ բացահայտվում և կարևորվում են Իրան-Ադրբեջան փոխհարաբերությունների բազմաթիվ շերտեր, հատկապես՝ էթնո-կրոնական գործոնի հաշվառմամբ, ինչը յուրատիպ կերպով հարստացնում է նաև միջազգային հարաբերությունների դերերի տեսության կիրառական դաշտը՝ ընդգծելով դրա վերլուծական ներուժը, հատկապես՝ Հարավային Կովկասի նման բարդ տարածաշրջանի առանցքային հարաբերություններից մեկի՝ Իրան-Ադրբեջան փոխհարաբերության ուսումնասիրման համար:

Գործնական տեսանկյունից՝ ատենախոսությունը կարող է զգալի օգտակարություն ունենալ ՀՀ պետական կառավարման քաղաքականության մշակման և գործադրման դերակատարների համար, քանի որ ատենախոսության շրջանակում կատարված վերլուծությունն ու եզրահանգումները կարող են օգտակար լինել ՀՀ արտաքին քաղաքականության

մշակման և որոշումների կայացման գործընթացում ներգրավված պետական կառույցների, վերլուծական կենտրոնների և փորձագիտական շրջանակների համար: Բացի այդ, գտնում ենք, որ ատենախոսությունը կարող է նոր հետազոտությունների խթան հանդիսանալ ոլորտով հետաքրքրված և զբաղվող շրջանակների համար:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է նախաբանից, չորս գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 162 էջ է:

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, սահմանվում են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, ներկայացվում են տեսամեթոդական հիմքը, գիտական նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը, ինչպես նաև աշխատանքի փորձարկման և կառուցվածքի մասին տեղեկությունները:

Առաջին գլխում նկարագրված են աշխատանքի տեսահայեցակարգային հիմքը, դերերի տեսության խորքային վերլուծությունը միջազգային հարաբերություններում և դրա կիրառելիությունն Իրան-Ադրբեջան հարաբերությունների համատեքստում: Առաջին գլուխը, ըստ էության, նվիրված է հետազոտության տեսական հիմնավորմանը և այդպիսով վեր է հանում դերերի տեսության ընտրության նախապատվությունը՝ ցույց տալով ավանդական տեսությունների բացատրական սահմանափակումները տվյալ դեպքի ուսումնասիրության համար:

Երկրորդ գլխում ներկայացված են Իրանի արտաքին քաղաքականության կրոնական և քաղաքական հայեցակարգերը և, այդ համատեքստում, իրականացված է Իրանի արտաքին քաղաքական ինքնության, դերային ընկալումների և հայեցակարգային մոտեցումների բարդ ու հակասական էվոլյուցիայի վերլուծություն՝ սկսած 1979 թ.-ի Իսլամական հեղափոխությունից: Սույն գլխում հետազոտված նյութը հնարավորություն է տալիս համապարփակ կերպով պատկերացում կազմելու իրանական արտաքին քաղաքականության կրոնա-դավանաբանական և գաղափարաբանական առումների վերաբերյալ: Հատկապես ուշադրության է արժանի Իրանի արտաքին քաղաքականության վերլուծությունը խորացող տարածաշրջանային անկայունության պայմաններում, Արևմուտքի հետ առճակատման նոր իրողությունների գնահատման համատեքստում:

Երրորդ գլխում վերլուծված են ադրբեջանական ազգային ինքնության գաղափարական-քաղաքական հիմքերը, արտաքին քաղաքականության հայեցակարգային մոտեցումների ձևավորումն ու փոխակերպումներն Ադրբեջանում, դրանց դրսևորումներն այսօր, երբ այդ երկիրը հավակնում է, օրինակ, տարածաշրջանային նոր ենթակառուցվածքների գլխավոր ճարտարապետի դերին՝ ձգտելով ամրագրել իր թելադրող կամ գերիշխող դիրքը տարածաշրջանային էներգետիկ ենթակառուցվածքների ու, հատկապես, կապուղիների համակարգում: Հատուկ ուշադրության է արժանի գլխում տեղ գտած Արցախյան 2020 թ. պատերազմից հետո Ադրբեջանի արտաքին քաղաքականության կոշտացման ու տարածաշրջանային աճող հավակնությունների վերլուծությունը, քանի որ քննության առարկա են դառնում 2020 թ.-ից հետո տեղի ունեցած արմատական փոփոխությունները, երբ, ըստ էության, ռազմական գործողությունների թատերաբեմում հաջողություններ գրանցելով, Ադրբեջանը ստանձնել է տարածաշրջանում և Հայաստանի նկատմամբ «հաղթանակած պետության» և «նոր իրողություններ թելադրողի» դեր, հաստատութենացրել է դաշինքը Թուրքիայի հետ Շուշիի հռչակագրով, խորացրել

հարաբերությունները Իսրայելի հետ, իսկ այսօր էլ, որպես քաղաքական, տեղեկատվական-քարոզչական և հիբրիդային ազդեցության ու ճնշման գործիք, շրջանառում է «Զանգեզուրի միջանցքի» և «Արևմտյան Ադրբեջանի» նարատիվները:

Ատենախոսության **չորրորդ գլխում** ներկայացված են էթնոքաղաքական հակասությունները Իրան-Ադրբեջան հարաբերություններում, հատկապես՝ «Հարավային Ադրբեջանի» հիմնախնդիրը՝ իր քաղաքական, պատմական, սոցիալական, գաղափարական խնդիրներով: Առանձնակի ուշադրության առարկա է աշխարհաքաղաքական և տարածաշրջանային գործոնների ազդեցության վերլուծությունն ու գնահատումը՝ Իրան-Ադրբեջան հարաբերությունների ներկայիս շարժընթացների վրա:

Եզրակացությունում ամփոփվում են հետազոտության հիմնական արդյունքները, եզրահանգումները, որոնք հաստատում են փաստարկն առ այն, որ Իրան-Ադրբեջան հարաբերություններում արձանագրված կայուն մրցակցության հիմքում ընկած են հիմնավորապես երկու պետությունների որդեգրած արտաքին քաղաքական ինքնությունների և դերային պատկերացումների կառուցվածքային անհամատեղելիությունը՝ կրոնագաղափարական, էթնոքաղաքական և աշխարհաքաղաքական հարթություններում դրանց դրսևորումներով:

Սուրեն Գազիկի Թադևոսյանի «Էթնո-կրոնական գործոնները Իրան-Ադրբեջան հարաբերությունների տարածաշրջանային զարգացման գործընթացում» թեմայով ատենախոսության վերաբերյալ ցանկանում ենք ներկայացնել հետևյալ նկատառումները.

1. Ատենախոսության երրորդ գլխի՝ «Արցախյան երկրորդ պատերազմից հետո Ադրբեջանի արտաքին քաղաքականության կոշտացումն ու տարածաշրջանային աճող հավակնությունները» վերնագրով չորրորդ ենթագլխում (էջեր 85-91) և, հատկապես, չորրորդ գլխի՝ «Էթնոքաղաքական հակասությունները Իրան-Ադրբեջան հարաբերություններում. «Հարավային Ադրբեջանի» հիմնախնդիրը» վերնագրով երկրորդ ենթագլխում (էջեր 106-117) հեղինակը մանրամասն կերպով անդրադառնում է «Հարավային Ադրբեջանի» ծնավորման պատմական և սոցիալ-մշակութային խնդիրներին, 1918 թ.-ին Հարավային Կովկասում ստեղծված պետության կողմից «Ադրբեջան» անվան ընտրությանը և յուրացմանը, ինչը Թեհրանում ընկալվեց որպես ծավալապաշտական հավակնություն, ինչպես նաև վերջին տարիներին հատկապես Ադրբեջանի կողմից Իրանի հյուսիսային նահանգների բնակչության ներուժի թիրախային օգտագործմանը և քաղաքական տարբեր շրջանակներում դրա շահարկումներին: Այսինքն, ընդհանուր առմամբ, ներկայացված են «Հարավային Ադրբեջանի» հիմնախնդրի պատմական խորքային արմատները՝ սկսած 19-րդ դարի Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերից, որոնք Արաքս գետը փաստացի դարձրին քաղաքական սահմանագիծ, մինչ մեր օրերը:

Կարծում ենք, որ ատենախոսությունը կշահեր, եթե հատկապես չորրորդ գլխի երկրորդ ենթագլխում հեղինակն անդրադառնար ոչ միայն հիմնախնդրի պատմական ու սոցիալ-մշակութային առումներին և տարբեր տարիներին՝ խնդրի վերաբերյալ ադրբեջանա-իրանական հարաբերություններում լարվածության դրսևորումներին, այլև ենթագլխի ամփոփիչ գնահատումներում ամենավերին՝ ռազմավարական մակարդակում, արժարժեք և գնահատեր Իրանի հյուսիսային նահանգների, մասնավորապես՝ Արևմտյան Ադրբեջանի, Արևելյան Ադրբեջանի, Արդաբիլի, Ղազվինի և Զանջան նահանգների բնակչության

անջատողական տրամադրությունների հնարավոր դրսևորումները՝ տարածաշրջանային ապագա զարգացումների դեպքում, փորձելով անել նաև կանխատեսումներ Իրանի բնակչության զգալի տոկոսը կազմող, տարբեր հաշվարկներով՝ 20-35 միլիոնից ավելի ազերիների հնարավոր վարքագծի վերաբերյալ: Սա ունի նաև անվտանգային նշանակություն ՀՀ-ի համար, քանի որ կարող է կամ ուղղակի կամ անուղղակիորեն ու հիբրիդային ձևով վտանգ հանդիսանալ տարածաշրջանում, ընդ որում՝ և Իրանի, և Հայաստանի համար, սկսած սադրիչ գործողություններից մինչև միգրացիոն հոսքեր՝ դեպի մեր երկիր:

Հաշվի առնելով «Հարավային Ադրբեջանի»՝ Ադրբեջանի կողմից արվող շահարկումները, իսկ այսօր արդեն՝ Ադրբեջանի կողմից նաև շրջանառվող «Արևմտյան Ադրբեջանի»՝ Հայաստանին վնասող նարատիվը, որոնք ընդհանուր առմամբ փաստում են այս երկրի ծավալապաշտական նկրտումները, իսկ Իրան-Ադրբեջան հարաբերությունների դեպքում՝ ունեն նաև ընդգծված էթնո-կրոնական նշանակություն և հիմք, հույս ունենք, որ ատենախոսի կողմից նշված խնդիրը լրացուցիչ պատշաճ ուսումնասիրման առարկա կդառնա իր հետագա հետազոտություններում:

2. Ատենախոսության եզրակացության մեջ (էջ 130) նշվում է, որ կատարված վերլուծությունը թույլ է տալիս վերահաստատել և զարգացնել ատենախոսության կենտրոնական փաստարկն առ այն, որ Իրան-Ադրբեջան քննարկվող հարաբերություններում արձանագրված կայուն մրցակցության և խոր անվստահության շարժառիթներն ու դրդապատճառները պետք է փնտրել ոչ թե զուտ իրավիճակային շահերի բախման կամ արտաքին ուժերի ազդեցության, այլ առաջին հերթին՝ երկու պետությունների որդեգրած արտաքին քաղաքական ինքնությունների, ռազմավարական կողմնորոշումների և տարածաշրջանային դերակատարման պատկերացումների կառուցվածքային անհամատեղելիության մեջ: Ըստ այդմ, նույն էջում ատենախոսը անում է եզրահանգում, որ երկկողմ հարաբերությունների վերլուծությունը ցույց է տալիս նաև կողմերի որդեգրած դերերի փոխադարձ վիճարկման երևույթը, որը հաջորդ՝ 131-րդ էջում, նշված է, որ դրսևորվում է դիվանագիտական մակարդակում՝ փոխադարձ մեղադրանքների, ինքնութենական պատումների վիճարկման և բացասական վերագրումների միջոցով, որոնք, ըստ ատենախոսի, էլ ավելի են խորացնում օտարացումը Իրանի և Ադրբեջանի միջև:

Կարծում ենք, որ ատենախոսության հիմնափաստարկը վերլուծելիս աշխատանքը ավելի կշահեր, եթե երկու պետությունների հարաբերությունները դիտարկվեին և գնահատվեին ոչ միայն կամ ոչ առավելապես բացասական կոննոտացիայի՝ հարիմաստության ներքո, այլ նաև երկու պետությունների ունեցած որոշակի ընդհանուր շահերի, տարածաշրջանային ընդհանուր շահերի, Իրանի և Ադրբեջանի երկկողմ ու բազմակողմ արտաքին հարաբերությունների, ինչպես նաև երկու պետությունների՝ արտաքին խոշոր դերակատարների հետ ունեցած հարաբերությունների զգայունությունների գնահատման և ի վերջո՝ տարածաշրջանում կայուն խաղաղության հաստատման դիտակետից: Ադրբեջանը և Իրանը, մրցակցելով և պարբերաբար տարբեր տիրույթներում նաև ընդդիմապայքարելով, միևնույն ժամանակ գործադրում են տարածաշրջանային կայունությանը և խաղաղությանը միտված որոշակի ջանքեր և քայլեր, կիրառում զսպման գործիքակազմ՝ լավ գնահատելով և հեռատեսորեն հաշվարկելով տարածաշրջանում հնարավոր անցանկալի զարգացումների հետևանքները նաև իրենց պետությունների

համար: Խնամքով և հաշվենկատ կերպով, կիրառելով փափուկ ուժի և հիբրիդային պատերազմավարության որոշ եղանակներ, ներքուստ մրցակցելով, սակայն արտաքուստ՝ միմյանց ջերմորեն ողջունելով ու համագործակցելով, ինչպես նաև՝ արդեն մատնանշված զսպման համակարգի մեխանիզմներ նպատակային կերպով գործադրելով՝ այս երկու պետությունները ու, հատկապես, Իրանը, փորձում են վարել բալանսավորված քաղաքականություն՝ հստակ գիտակցելով ընդդիմակա երկրի ծրագրերը, պլաններն ու քողարկված կամ անթաքույց նկրտումները:

3. Ատենախոսությունը զերծ չէ նաև որոշակի տեխնիկական թերություններից:

Նշված նկատառումներն ու առաջարկությունները ամենևին չեն արժեզրկում աշխատանքի գիտական և գործնական արժեքը: Դրանք միտված են լավարկելու և ընդլայնելու աշխատության հետագա հետազոտությունների ուղղվածությունը և բխում են ատենախոսության շահերից: Հուսով ենք, նշված նկատառումները կդառնան հեղինակի կողմից բազմակողմանի ու շրջահայաց կերպով ուշադրության և ուսումնասիրության առարկա՝ իր հետագա գործունեության մեջ, ինչպես նաև աշխատանքի՝ որպես մենագրություն հրապարակման ժամանակ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սուրեն Գագիկի Թադևոսյանի «Էթնո-կրոնական գործոնները Իրան-Ադրբեջան հարաբերությունների տարածաշրջանային զարգացման գործընթացում» թեմայով ատենախոսությունը ավարտուն գիտական աշխատանք է, որում լուծված են գիտակիրառական կարևոր նշանակություն ունեցող խնդիրներ:

Ատենախոսության հիմնական դրույթները հրատարակված են 7 գիտական հոդվածներում: Սեղմագիրը և տպագրված աշխատանքները լիովին արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ գտնում եմ, որ Սուրեն Գագիկի Թադևոսյանի «Էթնո-կրոնական գործոնները Իրան-Ադրբեջան հարաբերությունների տարածաշրջանային զարգացման գործընթացում» թեմայով ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին: Հեղինակը արժանի է ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի ռազմական ռազմավարական
հետազոտությունների կենտրոնի գիտնական-վերլուծաբան
ք.գ.թ., դոցենտ

Ա. Մ. Շահվերդյան

Ա. Մ. Շահվերդյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի գիտական քարտուղար,
հ.գ.թ., դոցենտ

Զ. Դ. Ասատրյան

« 04 », « 11 », 2025 թ.

